Հավելված

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Անուշավանի Արշակ Տոնոյանի անվան նախադպրոցական ուսումնական հաստատություն>>, ՀՈԱԿ-ի

տնօրենի 2025 թվականի հունվարի 31-ի N 10 հրամանի

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Արշակ Տոնոյանի անվան նախադպրոցական ուսումնական հաստատություն >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի(մարզիչ, մանկավարժ) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

| N | **Թափուր պաշտոնի անվանումը** | ***Հավակնորդին ներկայացվող պահանջները /չափանիշները/*** | **Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝** | **Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը /նյութերը/** |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Արշակ Տոնոյանի անվան նախադպրոցական ուսումնական հաստատություն >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության ֆիզիկական կուլտուրայի հրահանգիչ (մարզիչ, մանկավարժ) /0,5դրույք/ | 1.**Որակավորման պահանջները՝**<br>1) միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և վերջին տասը տարվա ընթացքում ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի առնվազն երեք տարվա ստաժ.<br>2.**Ընդհանրական պահանջներ.**<br>1)տիրապետի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկայով աշխատելու հմտություններին.<br>2) իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին, կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝<br>ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասի», «Լեզվի մասին», «Երեխայի | 1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.<br>2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.<br>3) տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը.<br>4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն | 1) դիմում (Ձև 1).<br>2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).<br>3) անձը հաստատող փաստաթուղթ.<br>4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).<br>5) ինքնակենսագրություն (Ձև 4).<br>6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.<br>7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.<br>8) Հայաստանի Հանրապետության |

<table>
<tr>
<td></td>
<td></td>
<td>իրավունքների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Լիցենզավորման մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը, «Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը», Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտերը.<br>բ. նախադպրոցական մանկավարժության, հոգեբանության, տարիքային ֆիզիոլոգիայի, անատոմիայի, մարզագործիքների վրա ուսուցման մեթոդիկայի հիմունքներին:</td>
<td>դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:</td>
<td>արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.<br>9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):</td>
</tr>
<tr>
<th colspan="2">Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը</th>
<th colspan="2">Դիմումների և փաստաթղթերի ընդունումը</th>
<th>Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները</th>
</tr>
<tr>
<td colspan="2">Վայրը` Շիրակի մարզ Արթիկ համայնք գ. Անուշավան 12/4<br>2025 թվականի մարտի 6-ին, ժամը` 11:30</td>
<td colspan="2">Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Անուշավանի Արշակ Տոնոյանի անվան նախադպրոցական ուսումնական հաստատություն >> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն /հեռ. 094322247/:<br>Հարցաշարերը տեղադրված են ԿԳՄՍՆ կայքում /Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի <<22>>հոկտեմբեր 2024 թվական N1981-Ա/2հրաման/<br>Փաստաթղթերի ընդունումը` ամեն օր, ժամը 08:30-17:30, բացի շաբաթ և կիրակի օրերից:</td>
<td>2025 թվականի փետրվարի 28-ը ներառյալ:</td>
</tr>
</table>